

Հ Ն Չ Ա Կ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ԿՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ.

Մենք արդէն վարժ ենք եւրոպական պե-
տութիւնների խարդաւանական ընթացքին առ-
հասարակ և մասնաւորապէս հայկական դատի
վերաբերութեամբ: Մենք վարժ ենք աններել,
թէ ինչպէս այդ մեծ պոռոտախօսները դերասա-
նութիւն են անում գիպլոմատիայի հոտած գաւի-
թում, լուծելով անլուծելին, երբ դա խիստ կեր-
պով իրանց շահն է շոշափում և իրանց մա-
ռաններում թաղելով այն, որը լուծելն իրանց
այնքան ձեռնտու է: Ի՞նչ փոյթ, թէ ամբողջ
ժողովրդներ են զոհւում այդ ընթացքի շնորհով:
Ի՞նչ փոյթ, թէ մարդասպանութեան ու մարդա-
կերութեան սկզբունքն ու գործնականն աւելի հիմ-
նական կերպով է հաստատւում նոյն իսկ Աւրո-
պայի ծոցում, սուլթանական լուսնեղջիւրի լոյսի
տակ կայսրութեան ամբողջ ահագին տարածու-
թեան մէջ և... կախազանի տակ նոյն իսկ Բօս-
ֆօրի փերին, եւրօպական դեսպանների աչքի ա-
ռաջ, և մահաւան դատաւճիտներով Մուշի խորե-
րում: Ար անհատի կեանքը, որ հպատակ ժողո-
վրդների արիւնը, որը հեղեղանման հոսում է
նրանց խոր վէրքերից, որ ամբողջ երկիրների սպան-
դանոց, հրդէհավայր ու գերեզմանատուն դառ-
նալը, որ դրանք աւազի դին անգամ չունեն սուլ-
թանների համար, այլ և նրանց վայրենութեանը
պատճառում են մի զիւական հաճոյք ու յազե-
ցում — այդ բոլորը կարող ենք մեզ բացատրել:
Բայց պղտելի է քաղաքականութիւն ասված այն
չառլատանութիւնը, այն կոյր եսամոլութիւնը,
մարդկային ցեղի ամեն արժանիք և միջև իսկ կեան-
քը ստորացնող ու ցեխին հաւասարեցնող այն
աչքակապ, ոճրագործ գործակցութիւնը, որ մարդ-
կային ու քաղաքացիական իրաւունքները յայ-
տարարող Աւրօպան ունեցել է և ունի դժօխա-
տիպ սուլթանների հետ: Մի Սօլլերրի, մի Գօլթու-
խօվսկի, մի Ղօբանօվ, ումանք իրանց պոռոտախօս ու
սփեհատական ձառերով, միւսերն իրանց խարդախ
յայտարարութիւններով՝ վաւերացնում են Հա-
մլիքի գործած հրէշաւորութիւնները և մաքիա-
վէլական ցինիկականութեամբ, լըրութեամբ յայ-
տարարում, որ ոչինչ չէին կարող անել սուլթա-
նի դէմ, որ եւրօպական տէրութիւններն իրանց
մէջ եղած հակասակութիւնների պատճառով ան-

զոր էին սուլթանի առաջ, թէկուզ այդ «անգօ-
րութեան» հեռանքը լինէր երէկ հայի կորուստը,
այսօր՝ կրէտացիի և մակեդոնացու ջախջախումը,
և վաղը... Աւ վաղն, ահա սուլթանը, քաջա-
լերված իր սիրելի թակակիր պաշտօնակիցներով,
կախազաններ է շարքով բարձրացնում Ա.
Պօլսում և մէկ ամբողջ ժողովուրդ արեան մէջ
խեղդելուց յետոյ, այսօր այդ ժողովուրդի անհատ-
ներին մահաւան դատապարտում, կախազանի թո-
կով խեղդում:

Սուլթանի կողմից դա արդէն կատարեալ, ամ-
բողջական խեղացնորութիւն է: Տասնեակ հազա-
րաւոր անմեղներին մորթելուց, խողովողելուց յե-
տոյ, ունենալով իբրև ամենագլխաւոր հիւք սպա-
նել սպանելու համար, արիւն թափել՝ արիւն
թափելու համար, հիմա դալ և հիւանդ ցնորքների
ազդեցութեան տակ, զիւահար կատաղութեամբ
բացարձակ կերպով Բիւզանդիոնի երկնքի տակ ա-
ռանձին-առանձին կախել տալ նոյն այն մորթը-
վածների զաւակներին — այդ բոլորն անցնում է
արդէն նոյն իրան Աերօնի ոճիրներից: Վա խեղա-
գարութիւն է: Վէկը կորցրած սուլթանական նա-
ւը, ընկած փրփրաբէշ ու լեռնանման այլքների
վիհերում, իրան այլ ևս դարձրել է դրանց խա-
ղերի ահաւոր պատահականութիւնների ենթա-
կայ, կոտորակով, ջարդով ինքը ևս այն հրս-
կայական ջանքերի մէջ, որոնցով ուզում է յաղ-
թահարել այդ պահասականութիւնները: Սուլ-
թանական ընթացքում կոյր ոյժերն այլ ևս տի-
րացել են կատաղի, անոխտ, ինքնաապան: Ամեն
հաւասարալիութիւն, ամեն շքահայեցողութիւն,
ամեն արթնութիւն այլ ևս խալաւ խախտվել ու
խաւարել է այդ ընթացքը հնարող թշուառա-
կան ուղեղներում: Միայն մնացել է անասունը,
մարդակեր անասունը, խելագարված արեան ծարա-
ւից, ցնկած ու շվարած իր ոճիրներից, արիւ-
նալի հայեացքով, արիւնաբամ ժանիքներով,
խելացնոր մոլեղնութեամբ:

Աւ որպէս ցլամարտի հանդէսում՝ ամբողջ
Եւրօպան հանդիսատես՝ երիւզով ծափահարում
է թիւբբական ցուլին, որ կատաղած արշաւում
է իր ամբողջ կայսրութեան տարածութեան մէջ,
իր հարուածներով մահացնելով թշուառ ժողո-
վրդներին:

Թշուառ ժողովրդներ, և սակայն նրանք չեն մեռնիլ: Նրանց կեանքի սոսկալի ողբերգութեան մէջ կայ մի լուսաւոր ջահ, որ սաւառնում է այդ դժ- ժոխքի վրայով: Ղա՛ս՝ դադափարն է: Նրան չեն կարող սպանիլ: Անձեռնմխելի՛ նա անվիրաւոր կեր- պով անցնում է ջարդերի միջով ու կախաղանի սիւնի տակով՝ աւելի գորացած, աւելի պայծառ, աւելի վսեմ:

Թշուառ ժողովրդներ, և սակայն նրանց սրբ- տերում աճում ու աճում է վրէժխնդրութիւնը, որն այսօր սրբացել է, ուռողված լինելով անթիւ նահատակների արիւնով: Վրէժխնդրութիւնը, զայրոյթը և դրանից ծնունդ առած գործը — ի- բրար կը յաջորդեն: Սպանութեանը սպանութեամբ միայն կը պատասխանվէ: Աթէ յանցաւորներն ու հրէշները մորթում ու կախում են, անմեղներն ու արդարները միեւնոյն հարուածները կը գործածեն: Ամեն ազգային, ամեն քաղաքական, սօցիալա- կան պատերազմներ անցել են նոյն ճամբայով: Բանակալութեան դէմ բռնի միջոցներ գործադրե- լով է, որ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը յայտարարեց աշխարհում մարդկային ու քաղա- քացիական իրաւունքները: Աթէ այդ Յեղափոխու- թեան զաւակները, — ներկայումս նրա այլ ևս վրէժ- ված ու սնանկ եւրօպայի որդիները, — ուզում են միայն հանդիսատես մտալ Արևելեան Ստրասբու- րիին, թող այսպէս լինի: Բայց սակայն արևե- լեան ժողովրդները հանդիսատեսներ չեն, այլ զերա կատարներ: Աւ նրանք կը լրացնեն իրանց պարտա- կանութիւնը, զաս առած Եւրօպայի անցեալ մեծ գործերից և նրա տէրութիւնների ներկայումս դէ- պի մեզ ունեցած ստոր ընթացքից: Աւ եթէ այս վերջինները չեն ուզում աչք բանալ, արևելեան ժո- ղովրդները կը կարողանան ի վերջոյ այդ թմրու- թիւնից նրանց դուրս հանել, դուրս հանել յարմար ժամանակին կեանքի իրաւունքի աղաղակով:

ՁԷՅԹՈՒՆԻ ԳԱՅՄԱԳԱՍՈՒԹԻՒՆԸ.

ՀԵՌԱԳՅՈՒՆԵՐ ԹԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ.

Կ. Պօլիս, 7 յունիս.

Գուռը եւրօպական պետութիւններու մօտ իր դեպքաններուն շրջաբերական մը զրկեց, որուն մէջ կասարկէ թէ, Օէյթուլին հիմակուրնէ քրիստոնեայ գայմադամ նշանակուիլը կրնայ իս- լամներու մէջ զրգուութիւն առաջ բերել. բայց կը խոստանայ գործադրել Օէյթուլի նկատմամբ իր այդ յանձնառութիւնը, երբ ուրիշ տեղեր ալ հայ գայմազամներ նշանակէ, բարենորոգումներու ծրա- դրին համեմատ:

Կ. Պօլիս, 10 յունիս.

Գետպանները, Արեւտի մասին իրենց խորհր-

դակցութեան միջոցին, զբաղեցան նաև Օէյթ- թուլի հաշուութեան պայմաններու գործադրու- թեան խնդրով և որոշեցին նոր դիմում մ'ընել Պարան և պահանջել քրիստոնեայ գայմազամի մը ա- նուանումը:

Կ. Պօլիս, 16 յունիս.

Օէյթուլի համար մի քրիստոնեայ գայմա- զամի անուանումն հրամայող Կրատէն ելաւ այսօր:

ՁԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. ԲԱՌԱՍՈՒՆ ԵՒ ԳԻՆԳՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ.

1895 ՆՈՅՄԵՐԻՆԻ 24-ԻՆ — 1 ՓԵՏՐՎԱՐ 1896.

(Շարունակութիւն) 1)

ՁԷՅԹՈՒՆՅԻ ԹՈՒՐԲԵՐԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵ- ՐՈՒ ԿՈՂՄԷ. — ՁԷՅԹՈՒՆՅԻ ԿԻՆԵՐՈՒ ԽԸ- ԲԱՒՈՒՍԱՆՔԸ ԵՒ ՅՈՐԴՈՐՆԵՐԸ.

Նկարագրելով կիրակի օրուան նշանաւոր պատե- րազմները Ձէյթուլէն դուրս, անցնիք այժմ՝ տեսնել թէ ինչն էր տեղի ունեցան այդ օր բուն Ձէյթուլ քաղա- քին մէջ:

Նախապէս այն ասեմ, որ երբ Ձէյթուլը հայե- րու կողմէ անկախ հռչակուեցաւ, Ձէյթուլի Հաճի- լար ասուած թուրքերը միջոց չունենալով փախչելու, ստիպուեցան անձնատուր լինել և թողուլ իրենց կեան- քի, պատւի և ստացուածքի ապահովութիւնը Ձէյթ- թուլեցիներու բարի կամեցութեան: Այդ Հաճիլար թուր- քերն, որոնք հազիւ 23 տուն են, Ձէյթուլի նախ- կին պատերազմներէն մէկ քանիին մէջ Հայերու հետ միասին կիւռած են օսմանեան զօրքերու դէմ, ինչպէս, օրինակ, Ազիզ փաշայի հռչակաւոր պատերազմին ժա- մանակ: Ձէյթուլեցի ազնուահոգի հայերն ալ հաւա- տարմօրէն միշտ պահած ու խնամած են այդ Հաճիլարն իբր աւանդ, ինչպէս Հայաստանի թուրքերն ալ նոյն բառը կը կրկնէին հայերուն մի ժամանակ, եթէ ոչ ի- բրապէս դոնէ ձեւական կերպով:

Այն օրէն երբ օսմ. կառավարութիւնը վերջնակա- նապէս հաստատուած է Ձէյթուլի մէջ, բոլորովին փո- խուած է Հաճիլարի նկարագիրն ու մտածողութեան կեր- պը: Սոքա միշտ աշխատած են վնասել հայերուն, մո- ռանալով, որ իրենց գոյութիւնը դարերով մնացել էր հայերու ափին մէջ: Մանաւանդ այս վերջին 15 տա- րուայ ընթացքի միջոցին կառավարութիւնը տուած լի- նելով այդ թուրքերուն կարեւոր գիրք ի տարէ յի ժողովներուն և ոստիկանական շրջանակներու մէջ, սոքա ջանացած են ճնշել հայերն ամեն տեսակէտով և նոյն իսկ սարկացուցած էին իրենց բնական կարկալար թա- ղի հայերը: Իրենցմէ էր այն չարագործ և հայատեաց Օսման չափուչը, որ 1890 թուականին սպաննուեցաւ Շաժ-բէշլիշեանի խմբի ձեռքով:

Չի նայելով դոցա հասուցած չարիքներուն, վե- հանձն Ձէյթուլեցիները յարգեցին իրենց աւանդա- կան սովորութիւնները և երբէք իրենց ձեռքերը չի պղծեցին այդ կեղտոտ թուրքերու արիւնով և ընդ-

1) Տես «Նշանակ» 1895 թ. 23, 24 եւ 1896 թ. 1, 2, 3, 8, 9, 10 եւ 11.

Հակառակը միշտ պաշտպանեցին՝ այն գրգռուած մի մասին դէմ, որ կուզէր միանգամ ընդ միշտ վերջ տալ այդ շարագործներու կեանքին: Անհերքելի է, որ Հին-չափեան կուսակցութեան գործիչները մեծ դեր կատարեցին այդ պաշտպանութեան մէջ, որպէս իրենց ազնիւ սկզբունք և մի մեծ թուր Հայակեր սուլթանին և իր գաղանային կոտորածը քաջալերող իր նման բռնապետներուն:

Երբ Աարդանլի Հայ պահակները լուր բերին թէ, թրքական բանակը կը քալէ Զէյթունի վրայ, պ. Ազասին, Նազարէթ իշխանը և Անդրէասեան Ասատուր աղան պատերազմական տեսակէտով առաջին պարտք Համարեցին հաւաքել Հաճիլարի բոլոր չափահաս մարդիկը և զետեղել Միաց. Ընկերութեանց նորաշէն վարժարանին մէջ: Բայց շարժ զորայ պատերազմի միջոցին, բոլոր Զէյթուն մնացած ժողովուրդը գրգռուած լինելով դոցա դէմ, կըսպառնան կոտորել: Սակայն Աստիւսեան կարապետ իշխանը, հեռատես նկատուածներով, այդ թուրքերը իրենց ընտանիքներով միասին կը տեղափոխէ իր տունը, Զէյթունի զալան (բերդը):

Արապի օրուայ պատերազմի միջոցին Զէյթունի դիւցազնուհիները Էշէք-Մէյտանիէն վերադառնալով Խաչ-Ալէմի հետ, հանդիստ չէին նստած տներու մէջ: Իրենց կրօնական պարտականութիւնները կատարելէ վերջ, այդ հերոսուհիները լեցւած էին փողոցներու մէջ, շատերու ձեռքին գաւազան:

Զէյթունցի կինը ոչ միայն Զէյթունի հոգին է, այլ և պատերազմի ղեկավարիչն ու հրամանատարը. զէյթունցի կինն եղած է գլխաւոր խրատուողն ու քաջալերողը գէյթունցի էրիկ մարդուն: Իւ այս անգամ փայտը ձեռքերուն դէս ու դէն, աներու ծակ ու ծուկը կը փնտռէին թաքցող թուլամորթ մարդեր և կը բռնադատէին պատերազմի գնալու: Եթէ այդ մարդն ունէր մի քիչ պատուաւոր դիրք, կըստիպէին զայն գնալ բարոյական ճնշող ու խայթող խօսքերով — «Ասործու վախցէք, աղալըրտաքիս, չիւք¹⁾ կեցիր էք էս տեղ, ան կտրըճրտաքը²⁾ կու ջարդուան, Ասործու խաթրուն,³⁾ գնացէք դաւղան⁴⁾»:

Իսկ նա որ ունէր հասարակ դիրք, նորան չկար բարոյական ճնշող խօսք. նորա գլխի կաշին հաստ էր այդպիսի կակուղ խօսքերէ ազդուելու և ահա այդ անսակներու գլխին հարիւրաւոր թուրք մէկէն կը բարձրանային ու կիջնէին:

— «Անասովօծնի⁵⁾, չիւք կու շինէք էս տեղ, ան կըտրըճրտաքը կու ջարդուան, դուք էս տեղ մեկ պիւր բռնէք⁶⁾ ուղուցէք, ուղուցէք⁷⁾ տեօկիւը⁸⁾»:

Իւ փողոցէ փողոց հրելով ու զարնելով կանցունէին կամուրջն ու կուղարկէին պատերազմի:

(Ար շարունակով) ՏՕՐՈՍՅԻ.

ԼՈՒՐԵՐ ԱԻԼԻՍԻՍԻՑ.

Ալիլիայէն եկած զանազան նամակներէ կը քաղենք հետեւեալ լուրերը.

ՊԻՐԵՃԻԿ քաղաքի Հայերը, որոնք անցեալ ամսուան Հոկտ. 20 ի և դեկտ. 20 ի արիւնալի դէպքերէն վերջը՝ բռնի իսլամութիւն ընդունած էին, վերջերս, եւրոպական քննութիւններու և միջամտութիւններու

րու հետեանքով՝ արածուներ են կառավարութենէն իրենց նախկին կրօնքին վերադառնալու: Գայմագամը, Խալիլ-Սըրտգի էֆէնտի, պատասխանատու բռնութիւնով պաշտօնանկ եղած է: Քաղաքին 200 տուն Հայերն երբ կըստիպուին տաճկական կրօնն ընդունիլ, թուրքերը կուզեն անոնցմէ կիներն ու աղջիկները բռնի ամուսնացնել իսլամներու հետ. սակայն Հայերէն շատերն, այս շարիքին ստաջքն առնելու համար, անմիջապէս տաճիկ հօճան երու միջոցաւ իրենք իրենց մէջ նիք և հ կըլլան, նոյն իսկ ազգական ազգականի հետ: Քաղաքին հոռուական Հայերու հոգիւ Արիստակէս վարդապետ թիւքէանը 48 օր զնդան նետուեր, գայմագամէն ու ստիպաններէն ծեծուեր, շարժարուեր ու լիկուեր է:

ՀԱԼԷՊԻ բանտին մէջ կը մնան դեռ բուական թուով Հայ բանտարկեալներ, որոնց մեծագոյն մասը Այնթապէն է և որոնց մէջ են նաև Հահէնը և Հայ բողոքակոն քարոզիչ մը: Հալէպ բերուած են Եղեւսի հոռուականը Հիւսէին փաշան, որ մին է կոտորածի թելադրող գազաններէն, իր մէկ ազգականը և Միւֆթի գաւազանուն հարուստը: Ասոնք դատաստանի ենթարկուած են Հալէպի կուսակալին կողմէ և կըսուի թէ մահուան դատապարտուած են. բայց մենք աւելի կը հաւատանք որ պիտի վարձատրուին սուլթանի շքանշաններով:

ԵԴԵՍԻՍԵՆ գրուած նամակ մը տեղւոյն սոսկալի կոտորածներուն պատասխանատուութիւնը, թուրքերէն վերջ, տգէտ Հայ եկեղեցականներուն կը վերագրէ: Երբ կառավարութիւնը կուզէր զէնքերը ժողովել, Հնչակեանները յորդորած են ժողովուրդը զէնք չյանձնել ու դիմադրել. բայց քահանաները խաչով և աւետարանով տունէ տուն պտըտելով՝ յանուն կրօնի ստիպած են որ զէնքերին յանձնեն՝ որպէս զի կառավարութիւնը զիրենք պաշտպանէ. նոյն քահանաները իրենց հակառակ հանդիսացող Հնչակեանները, 105 հոգի, կը մատնեն և բանտարկել կուստն: Այսպէս, եկեղեցականներու յանցանքով անդէն և անստաջորդ մնալով խեղճ ժողովուրդը, յայտնի է թէ ինչ աղետալի վախճան ունեցաւ: Այս սարսափելի օրինակով գէթ այսուհետև մեր Հայ եղբայրները պէտք է ըզգաստանան և իրենց զէնքը իրենց անձէն աւելի սիրեն, քանի որ միայն զէնքով է որ կրնան պաշտպանել իրենց կեանքը այս անապահով և բարբարոս երկրին մէջ:

ԲԻԼԻՍԻ կոտորածին մէջ մեռնողներուն թիւը 54-55 ի կը հասնի, նոյնչափ ալ վիրաւորուածներ կան. կոտորածին պատճառ և նախայարձակ եղած են, ինչպէս ամենուրեք, թուրքերը և տեղական կառավարութիւնն ալ բողոքովին անփոյթ գտնուած է արիւնահեղութիւններու առաջքն առնելու:

ՄԱՐԱՀԻ բանտարկեալներէն 18-ը անցեալ շաբաթ արձակուեցան. այսօր զոյց կը շջի թէ մնացեալ բանտարկեալներն ալ արձակուած են՝ հիպատոսներու ազգու դիմումին վրայ:

ԶԵՅԹՈՒՆԻ մէջ հիւանդութիւնը վերջացած ըլլալով՝ տօքթ. Բայբըր անուն անգլիացի երիտասարդ բժիշկն ալ, որ ամիս մ' առաջ հոն գացած էր, վերադարձած է Այնթապ:

1) Ինչ. 2) Կտրեծները. 3) Սիրուն. 4) Պատերազմ. 5) Ո՞վ ձեզ անստաջորդներ. 6) պիտի բռնէք. 7) իրենց պատերազմական մարջն է. 8) ն, յանալ. 8) Պատերազմ: Ծ. Թ.

Ն Մ Մ Ա Կ Հ Ա Ճ Ը Ն Ի Ց

2 փետրուար 1896

Օչէ յԹուսի ապտամբութեան առթիւ տեղւոյս խտուածիւնները բազմապատկուեցան և Տաճիկներու կատաղութիւնը չափ չունի: Թուրք խուժանը, կառավարութեան քաջալերուած, ասպարէզ գտած է կողոպտել ու վերաւորել այն ամէն Հայեր որ անհրժեշտ գործերու համար կը յանդգնին քաղաքէն հեռանալ նոյն իսկ մի ժամու ճանապարհ: Շրջակայ գիւղերու մէջ գտնուած տոսանորդի ամբարները կողոպտուեցան. Հայերու արջուներն ու տաւարները թալան տարուեցան. նոյնպէս կողոպտուեցան գեղերու եկեղեցիներն ու ժողովարանները: Աւարի սրուած տասանորդի ամբարներու տէրերը կաշավարութեան դիմում ըրին. բայց փոխանակ արդարութիւն գտնելու բանտարկուեցան և կառավարութիւնը դարձեալ իրենցմէ կը պահանջէ տասանորդի վարձակալութեան մասնավճարները (թագսիթները), չնայելով որ արդէն ամբարները դատարկուած են:

Տեղացիները մեծաւ մասամբ շրջակայ քաղաքներն երթեկեկելով կը ճարին իրենց ապրուստը. հիմա որ հաղորդակցութիւնները խափանուած են, ժողովուրդին սպրուստի և շահու գոնէն ալ ցոցուած են: Մանաւանդ որ, Օչէ յԹուսի պաշարումին առթիւ, կառավարութիւնը մեր ձիերն ու ջորիներն ալ գրաւեց, անոնցմով իր զորքերուն ուստիս և ուղղամիտերը փոխադրելու համար: Աւելի քան վեց հարիւր ձիեր և ջորիներ, որ Հաճընցիներէն շատերու միակ ապրուստի միջոցն էին, անօթի ու ծարու. տաժանելի աշխատութեան չկրնալով դիմանալ, սատկեցան. ջորեպաններէն 16 հոգի այստեղ յետին թշուառութեամբ սովածահ կըլլան և ողջ դարձողներն ալ ճանապարհին աւազակներու հանդիպելով՝ իրենց ցնցոտի զգեստներս տակ վերջ՝ անոնց հարուածներուն տակ ջախջախուած և վերաւորուած կիսամեռ տուն կը վերադառնան: Յաւալին այն է որ, յիշեալ աւազակներու արարքներուն մասին տրուած աղբրասպիրներու վրայ զանոնք թէև կը բանտարկին, բայց քանի մ'օրէն ազատ կարձակին. այնպէս որ կը կարծուի թէ աւելի ազգեցիկ հրահանգներ տալու համար միայն իրենց մօտ կը կանչեն այդ շարագործները:

Տուրքերու գանձումն առաջ կը տարուի սարսափելի եղանակներով. պաշտօնեաներն անողորելի կերպով անէ տուն պարտելով՝ վճարելու անկարող գանուողները կը բանտարկեն, անոնց օրական պարէնը, պղնձեղէնները և ցնցոտի անկողիններն անգամ ի վաճառ հանելով ի հաշիւ տուրքի կը գանձեն:

Մէկ խօսքով, ժողովուրդը, ամբողջ 8 ամսէ ի վեր, արտաբուսա վայրագ թուրքերէն և ներքուստ տեղական կառավարութեանէն կեղեքուելով և ապրուստի ամէն միջոցներէ զրկուելով՝ վերջին ծայր չբաւորութեան հասած է: Այսօր 2,000-ի չափ հայ ընտանիք պատառիկ մի հացի համար դռնէ ի դուռ կը թափառին սակայն այդ շնորհն ընող մ'ալ չկայ. վասն զի ամէն մարդ աղքատացուած, ամէն մարդ օրապահիկ կարօտ է: Եթէ Հաճընի ժողովուրդեան անմիջական դրամական օգնութիւն մը չլինէ, սովը մատալու է: Բայց այսօր սովը վտանգէն աւելի մեր վրայ կը ճնշէ մեր անապահով վիճակը և մեր ընտանեկան պատուոյն գէմ գործուած նախասինքները վայրագ թուրքերու կողմէ:

նէ: Թշուառ հայ կիներ, որոնց ամուսինները բանտարկուած են տուրքի համար, երբ փայտի կերթան և մի քանի կտոր չոր խուլներ ուսերնին առած քաղաք կը վերագանան, գահապան զինուորը անվայել հայհոյանքներով զանոնք կահաբեկեն և անոնց բերած վառելիքն ալ անխղճաբար կտունեն անոնց ձեռքէն:

Այս բոլորէն կղերական դասէն մի քանի անձինք ձերբակալեցին. պատճառը թէև անյայտ է, բայց աւելի կը կարծուի թէ տուրքի գանձման համար է. կըսուի թէ, ի հաշիւ տուրքերու 3,000 տկոյ գումարի մը համար իբր երաշխաւորութիւն՝ բուն ստորագրել պիտի տան պարտամուրհակ մը այդ քահանաներուն:

Այս անտանելի վիճակին հանդէպ հայ ժողովուրդն աւելի գրգռուած ու դայրացած է քան թէ վճատած և յուսահատած: Յուսահատած են անշուշտ անոնք որ, հեռուն նստած՝ մինչև հիմա չօգնեցին յեղափոխական գործին, այսօր չեն օգներ թշուառներուն և վաղն ալ միտք չունին օգնելու կռուով ու պատուով մեռնողներուն...

ԿՏԻՃ.

Ն Մ Մ Ա Կ Ա Տ Ա Ն Ա Յ Ի Ց.

18 փետրուար 1896

Վերակի օրը, 11 փետր, ժամ 9 ու կէսին (ը. թ.) քաղաքիս շուկայի քէմէր-ալ թը թաղին մէջ մի քանի թուրքեր՝ մզկիթէն ելած ատեն հանդիպելով Միհրան Պաստաճեան և Միհրան Բէքլեկեան անուն երկու Հայերու, կը յարձակին անոնց վրայ և պատճառելով թէ «դուք մեր հուատքին հայհոյեցիք» բիրտով շարաշար կը հարուածեն զանոնք: Այս դէպքըն աղբարար նշան մը կըլլայ. ամէն կողմէ զինուած թուրքեր կը յարձակին Հայերու վրայ և «դեռ պիտի ապրեցնե՞ք այս կեանքները» պոսայով՝ հանգիպած Հայը կը ծեծեն, կը վերաւորեն: Կառավարութիւնը կը միջամտէ. բազմաթիւ զինուորներ և ոստիկան-զինուորներ դէպքին վայրը գալով՝ իրենք ալ, խաղաղութիւնը վերահաստատելու համար... կը յարձակին փախուող Հայերուն վրայ և հրացանի կոթով կը ծեծեն զանոնք: Իսաչեք 21 օրը ան տնտես երիտասարդը մահամերձ վիճակի մէջ քաշկոտելով կառավարութեան դուռը կը տանին: Արիշ վերաւորեալ մը, երբ կառավարութեան դռնէն ներս կը մտնէին՝ մեռաւ: Պետրոս Եօճիւրեան անուն հայ մ'ալ փողոցէն անցած ժամանակ, երեք Տաճիկներ վրան յարձակելով գլխէն կը վերաւորեն. խեղճ արիւն-սթաթախ վիճակի մէջ երբ պահականց կերթար բողբոջու, ոստիկանները զինք կը բռնեն կը տանին. խեղճ մարդն այսօր բանտի հիւանդանոցը հոգեւորքի մէջ է, ոչ ոք կը ճանչնայ: Մի քանի թուրքեր, սմբոխն աւելի գըրգռելու դիտուածով՝ Սպահը փազարը կոչուած տեղը կսկսին հրազէն պարպել: Արիշ թուրքեր ալ աւարառութեան կըսկսին: Պագալ Յովակիմ, Գըրիգոր Գօտալ աղեան, Կարապետ Թերզեան, Հաճի Գէսորգ Գաղիլեան Ենեան, Կարապետ Պագալ Մանուկեան, Էմմիօղլու Մկրտիչ, Յովակիմ Անուշիկեան, Հաճի Կարապետ Տօպուրեան, Գըրիգոր Ավճեան անուն անձերը և արիշ շատեր թէ կը ծեծուին և թէ անոնց խտուածներն աւարի կը տրուին: Բօլուէնի օֆիլոս անուն Յոյնը Եաղ ճամիի տաջև կը վերաւորուի և կը մարի հոն: Հաճընցի Աւագ, իր Կարապետ և վար-

գեղար որդիներու հետ, կամուրջի կողմը իրենց տունէն եկած ատեն, թուրքերը, զանոնք սաստիկ գանա- կոծելէ վերջ, իրենց մէջքէն դաշոյն մը կը հանեն և այս Հայերու քովէն գտանք՝ ըսելով՝ երկու եղբայրները բանտ կը տանին. իսկ հայերէնին կը յաջողի փոխելը: Երեսունէ աւելի վիրաւորուածներ բանտ կը փոխադրուին. բայց դեռ ուրիշ վիրաւորուածներ ալ կան որոնք տուններուն մէջ պահուած՝ չեն համարձակիր իրենց վիրաւորուած ըլլալն յայտնել...

Բարեբաղդաբար այս դէպքը պատահեցաւ կիրակի օրը, երբ քրիստոնեաներու մեծագոյն մասն խանութները դոց էին և Հայերէն շատերն իրենց տուներն էին. ընդհակառակ, եթէ լուր օր պատահէր, կոտորածն ահաւելի կը լինէր և Ատանան ուրիշ շատ մը քաղաքներու աղետալի վիճակին կենթարկուէր:

Վէպքին յաջորդ օրն ալ Հայերը չբացին իրենց խանութները, իրենց փախէն տուներուն մէջ փակուած մնալով. իսկ թուրքերը բիրերով, ատրճանակներով ու դաշոյններով զինուած՝ սպառնական կերպով կը շրջէին շուկան և թաղերու մէջ: Կոյն օրը դարձեալ մի քանի խանութ կողոպտուեցաւ: Բոլոր դպրոցները փոցուեցան:

Վէպքին երկրորդ օրէն բազմաթիւ հայեր սկսան Ատանայէն Մերսին ուղևորիլ. անցած օր 150 անձեր գացին, երէկ ալ 50 անձեր: Կառավարութիւնը կաշարանը զօրքեր ու ոստիկաններ զգած է, արգիլելու համար Հայերու Մերսին երթալը:

Արսուի թէ շրջակայից շիրքէլ, քիւրա և ուրիշ աշիրէթներ և գիւղացի թուրք խուժանը, իրենց սըրուած գաղանի հրահանգի մը համաձայն, կը պատրաստուին յարձակում գործելու քաղաքիս Հայերու վրայ: Այս լուրն ահ ու սարսափի մէջ կը թողու խեղճ քրիստոնեայ ժողովուրդը, որ իր տունն ապաստանած կըսպասէ իր ճակատագրին. վեց օրէ ի վեր չհամարձակելով իր տան դուռն իսկ ելնելու. այս կերպով դեռ քոց կը մնան բոլոր խանութներն ու կրպակները: Կառավարութիւնն իր սփորական խաբէրայ ընթացքին հետեւելով՝ կը ջանայ ժողովուրդն համոզել և ստիպել որ խանութները բանտ: Բայց Հայերն իրաւամբ չեն վստահիր այդ սուտ խոստումներուն:

Մերսինի նաւահանգիստը գտնուող ամերիկեան զբոսահարին նաւագետը և հիւպատոսներէն ոմանք ներկայացան կուսակալին և բողոքեցին քաղաքին մէջ տիրող խանաշիրիթութեան և անապահովութեան մասին. կուսակալը կը ջանայ թուրքական շոյրթութիւններով զանոնք համոզել թէ գէպքն անկարևոր սամկական կոխ մ'էր:

Բաւական ժամանակէ ի վեր բանտարկուած Կարապետ Աեօվտէրէլեան, Ստեփան Արզուտեան և ուրիշ մի քանի Հայեր այլ և այլ նեղութիւններու և սպառնալիքներու կենթարկուին և մահուան վտանգի մէջ կը գտնուին. Փրանսական հիւպատոսը կառավարութեան դիմում ընելով պահանջեց որ ժարգավայել կերպով վարուին անոնց հետ:

Բանտարկեալներու թիւը կաւելնայ օրէ օր:

Ռուսիոյ հիւպատոսն ու փոխ-հիւպատոսն ալ նախատուեցան վերջին օրերս: Հիւպատոսը, Մ. Խրիստոֆօր, որ Տարսն կը բնակի, երբ փոխ-հիւպատոս Համաձա Կոստիի հետ իր տան մօտի փողոցէն կանցնէր, թուրք մը դաշոյնի ձեռին կը յարձակի անոր վրայ. բայց հիւպատոսն և ընկերը կը պաշտպա-

նուին. երբ սպառնացող թուրքը կը հեռանար, հիւպատոսն անկէ անցնող ոստիկանի մը կը հրամայէ «յանու Ռուսիոյ վեհախառ ինքնակալին» որ ձերբակալէ այդ չարագործը. բայց ոստիկանը կարևորութիւն չտալով կանցնի կերթայ: Երկրորդ օրը փոխ-հիւպատոսն Ատանա կուգայ կուսակալին բողոքելու. բայց, կառավարական պալատ մտած միջոցին, թուրք տղաքներէ կը քարկածուի: Կուսակալն այս դէպքերը ընելով՝ անհոգ կերպով կը պատասխանէ «էհ, ինչ գիտանք թէ ո՞վ էր. դուք գտէք, մենք ալ պատժենք»: Կոյն պէս յիշեալ ուսուական փոխ-հիւպատոս Կոստիի տունը կը քարկոծուի և պատուհաններու ապակիները կը կոտորուին թուրք խուժանի կողմէ:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԴԵՊԷՐ.
(Շարունակութիւն) 1)

Խժգժութիւնների սկսած օրից, թուրք կառավարութիւնը զենքի կռիւց բոլոր քուրդ աշիրէթներն ու թուրք ժողովուրդը: Ծեր և երիտասարդ, բոլոր մահմետականները՝ այնպէս ուսերնին՝ ման ևն գալիս ամէն տեղ: Հայ ժողովրդի մնացածներն ամէն բոպէ ահ ու դողի մէջ են:

Ստոյգ աղբիւրներից տեղեկանում ենք, որ խժգժութիւնների երրորդ կիրակի օրը, գիշերանց, շուկայից ու տուններից կողոպտուած ամբողջ ապրանք և իրեղէնները կառավարութեան նախապէս պատրաստել տուած 1400 ուղտերի վրայ բեռնուած՝ ուղարկուած են Իրազ-Արաբիայի Գարգօր քաղաքը, այստեղից 3 օրուայ հետևորութեան վրայ:

Մի քանի օրից ի վեր, կառավարութիւնը այրուած գիւղերի տեղերը հերկել է տալիս, իրա վայրագութեան հետքերը կորցնելու համար. իսկ 10-15 գիւղի մնացորդ՝ ծեր, պառու, փոքրիկ մանուկներ և լճկուած աղջիկները մի գիւղի մէջ ժողովելով՝ ստիպում են նրանց որ խրճիթներ շինեն և բնակին մէջը:

Այդ մեր պատմած բոլոր իրողութիւններից յետոյ, այժմ էլ թուրք կառավարութիւնը սկսաւ տեսակ տեսակ խաղեր հնարել աշխարհ խաբելու և իր տուած մահացու հարուածներին մի հատ էլ աւելացնելու: Տիրապետող երևելիներէն գաղպեան Յովսէփը և նրա որդին, Մինասանը և Մէնտիլեանը բանտարկեց, պահանջելով նրանցից ստորագրութիւն, թէ Հայերն են գրգռիչ ու պատճառ տեղի ունեցած անկագութիւններին. «Ի՞նչ մերժէք, ըսած են, կախաղան կը բարձրացնենք ձեզ և ձեր ընտանիքների բոլոր անդամներին»: Թուրքերը և կնամարդի հարուստներին, երկիւղ կրելով այդ սպառնալիքից, անձնագրագրութիւն անելը շատ հաւանական է:

Բաց ի այդ երևելիներից, ձերբակալեցին նաև 30-40 Հայեր. թուրք պաշտօնեաները իրանց ուղածի պէս քննական թղթեր գրելով բերում առաջարկում են բանտարկեալներին որ ստորագրեն. մերժողը ընկնում է խիստ գանակոծութեան տակ մինչև որ յուսահատ և կիսաշունչ՝ ստորագրում է գրութիւնը, ինչ որ էլ լինի այն:

Խժգժութեան կատարումից վեց օր յետոյ, կառավարութիւնը քաղաքապետական բաժնում բացարձակ աճուրդի հանելով ծախել սկսաւ կողոպտուած հայ անեղից և խանութներից հասարակ ապրանքներ և

1) Տես «Հնչակ» Nր 4, 5, 6, 8 և 12:

իրեղեններ հարկերն 90 պակաս արժողութեամբ: Հինգ օր տեւց այդ գործողութիւնը և յետոյ, չենք գիտեր ինչ հրահանգից ստիպուած, մունեստիկ կան- շել տուեցին հայ թաղերում, որ ով որ ցանկանում է... յախշտակուած ապրանքները վերստանալ, թող զիմէ քաղաքապետական գուռը: Մի քանի կողոպտուած Հայեր զիմեցին յիշեալ տեղը՝ որ ստանան իրանց կորուստը. բայց յուսախաբ եղան. որովհետեւ կառա- վարութիւնը նրանց ներկայացրեց հին և կեղտոտ մի քանի ձեռք հալաւ և գիւղային պատառոտած հագուստ- ներ: Երբ այդ մի քանի Հայեր համարձակեցան խընդ- րել որ, իրանց խանութներէց ու սներից կողոպտուած միջինաւոր արժողութեամբ ապրանքները կառավարու- թիւնը վերագարձնել բարեհաճի, անմիջապէս բան- տարկուեցան, և մինչև այսօր էլ յայտնի չէ թէ ուր են:

Առավարութիւնը առարկեց թէ զինուորական զէն- քեր են գտնուում հայ թաղերում: Եւ այդ պատրուա- կով բռնի և անկանոն կերպով մտաւ հայ տները, խուզարկութիւններ կատարեց և գուրս բերաւ ստիական հին որսի հրացաններ, որոնց շատերը քրդերի կողմից գրաւ դրուած էին, փոխարէն փող ստանալով: Այժմ ստոյգ աղբիւրներից լուծ ենք, որ կառավարութիւնը յատուկ ոստիկանների հետ երկու սնտուկ զինուորական զէնք է ուղարկում Պոլիս: Տարակոյս չկայ որ, այդ զէնքերն այստեղի զէնքի տէփօնից է, բայց Պոլիս տարուելով պիտի ասուի թէ Հայերից է առնուած:

Աչրէկ կրկին մի քանի Հայեր ձերբակալելով, ըս- պանացիք են որ կամ պէտք է ասեն թէ շուկայի հըր- դեհը քրիստոնեաներ ձգեցին և կամ կախաղան կը բարձրացնեն: Երբ այդ ողորմելիները պատասխանում են թէ ինչպէս կարող են զրպարտել, քանի որ իրանք գիտեն թէ իրականութիւնը գրաւ հակառակն է, այնքան չարաչար գանակովում են, որ այսօր ամէնքն էլ կի- սամես հիւանդանոցում տառապում են:

Տիգրանակերտում երեք օր շարունակ կոտորած լինելով, ճիշդ հաշուով գիտցուած է որ, քաղաքիս մէջ մեռածների թիւը 3500ի կը հասնի. դրանցից մի մասը մոխիր դարձան արդէն շուկայի հրդեհին մէջ, մի մասն էլ կառավարութիւնը Տիգրանակերտի պարսպից դուրս զիջել տալով՝ երեք օր այնպէս թողուց շներին ու գիշակեր թռչուններին իբր որս և յետոյ մնացածի վրայ էլ նաւթ թափելով այրեցին: Գիւղերի մարդու կորուստը 4-10,000 կը հաշուուի: Այսօր Տիգրանա- կերտի մէջ բացօթեայ մնացած են թէ գիւղացի և թէ քաղաքացի՝ 4-500 որք և անտէր երկու սեռի մա- նուկներ, 2-300 երիտասարդ անպաշտպան աղջիկներ, 8-900 որբւարի կանայք և 5-600 տղամարդիկ, դը- րանց բոլորն էլ առանձին առանձին ընտանիքի զուակ- ներ, որոնց բոլորի ընտանեաց անդամները, առանց կտրութեան սեռի և հասակի, ջարդուել են բարբարոս Տաճիկների կողմից:

Վըթըրպըլ հայ գիւղը, որ Տիգրանակերտից դէպ հիւսիս կէս ժամ հեռաւորութեան վրայ է գտնուում, 2-300 տանից մի վաթսուց տարեկան պա- ռաւ է ազատուել:

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԻՑ.

Մուշ, 18 ապրիլ 1896.

Բարենորոգմունք սկսան գործադրուիլ հոս... Ըաբ- թուս կառավարական յատուկ հրամանով սկսան Հա-

յերէն ոստիկան և ոստիկան-զինուոր (ժանտարմա) գրել, և մինչև հիմա 1-2 հօգի՝ որոնք ծանօթ են իրենց մատուցութեամբ, ներկայացած են գրուելու. մինչ- դեռ գիւղերու մէջ և մանաւանդ Պուլանըրի կողմերը՝ քաղաքական նպատակով մասնաւորներու սպանութիւնք տեղի կունենան: Ընդհանրապէս Հայերէն կրսպանուին այնպիսի մարդիկ, որոնց կորուստն զգալի բաց մը կը թողու հասարակութեան մէջ: Առավարութիւնը չկրնա- լով մեծ ջարդ մը առաջ բերել Եջոյ և Պուլանըրի մէջ, այժմ մէկ մէկ սպաննել կուտայ իր ուղած ան- ձիւքը: Այսպէս անցեալ աշնան սպանուեցաւ Պուլանը- գայ Վիզ գեղի նշանաւոր տղգայիններէն Աւետիս Մաք- սուտեանը. իսկ այս վերջին օրերս ալ, Ապրիլ 15- ին, կառավարութեան և քիւրտերու վոյժփոխգրութեան զօհ գնաց Չիուրայ խարձ գիւղի սէս Միրօն, հանրածա- նօթ Մուսա պէյի դէմ գատ վարողը, որուն հայրն սպաննած և իր եղբօր աղջիկ հոչակաւոր կիւլիզա- րը կամ կուլօն փախուցած էր այդ աւագակը: Մի- րօ, նոյն օրը, կառավարութեան կողմէ պաշտօնով մը Արտօնը երթալու պահուն՝ նախապէս տեղի ունեցած կարգադրութեամբ մը՝ Մուսա պէյի աղբականներէն Սիւլէյման պէյի որդի ճէմալ պէյի կողմէն գնդակահար կըսպանուի: Ոճրագործի ձերբակալման համար ոչ մէկ ջանք չլինիր կառավարութեան կողմէ:

Վասոյս 16-ին և 17-ին տեղի ունեցաւ անդուստ պատժական դատարանի առջև մատնիչ տ. Բարսեղի սպանման առթիւ բանտարկուածներու դատավարու- թիւնը, որոյ մէջ հայ ամբաստանեալներու պաշտպանն էր յայտնի թուրքամուլ և կաշառակիր Ջեարէթցի Թագէոս աղան: Ամբաստանեալներէն Բաէեան մ. Արապետ և Միսաք աղաները դատապար- տուեցան 7-ական տարուան բերդարգելութեան, Յը- րօնքցի Պեարոսը և Օղունքցի Մխիթարը 5 ական տարուան, իսկ Տուշօեան Եղիզար և հա- ճընցի Ռուբէն (Արսէն մականուանեալ) իբրև քա- ղաքական յանցաւոր, (առաջինը՝ իբրև անդամ տեղ- ւոյս Հնչակեան Մասնաձիւղի և երկրորդը՝ իբրև Հըն- չակեան կուսակցութեան առաքեալ) մահուան դատա- պարտուեցան. նոյնպէս մահուան դատապարտուեցան մատնիչ Պօղօեան Մուրատը, Անթուածեան Միսաքը և Խասգիւղցի Մարգարեան Նիկողա- յոսը, որոնք իրենք զիրենք ազատելու սին յուսով՝ բազմաթիւ անմեղներու ձերբակալման ու չարչարման պատճառ եղած էին: Նոյնպէս Արանցի Հայկ տ. Աւը- դանեան անուն երիտասարդը որ նոր դարձած էր Գէորգեան ձեմարանէն՝ 7 ամսուան և Առաքելոց վան- քի Յարութիւն վարդապետն ալ՝ իբր յեղափոխա- կաններու պահող՝ 2 ամսուան բանտարկութեան դա- տապարտուեցան:

Այսպէս վերջացաւ այն տուամը որ վերոյիշեալ մատնիչներու վատութենէն ծնունդ առաւ: Այս վերջին- ները քաղաքիս մէջ բաւական վարկ ստացած մար- դիկ էին և գիտնալու էին թէ մատնութեամբ չեն ա- ղատուիր բանտէն, այլ աւելի ևս կը ծանրացնեն ի- րենց յանցանքը. և այս թող լինի օրինակ ամէն մի Հայու, որ մատնիչը ուշ կամ կանուխ, այս կամ այն եղանակով, աւելի ծանր նեղութեանց և հալածանքի կը մատ- նուի, քան թէ անմեղ և կամ նոյն իսկ գործունեայ մէկը: Վատաւորները նախապէս Բաէեաններէն 200 ոս- կի կաշառք առած էին, զիրենք ազատ թողուլու խոստումով, բայց վերջը անոնց 7-ական տարի բերդարգելութեան

վճիռ տուած են յանիրաւի, սա մտածուով որ եթէ ազատ թողուին զանոնք, գուցէ իբր կաշառակեր ամբաստանուէին միւս պաշտօնեաներու կողմէ, որոնք իրենց աչ բաժին կուզէին:

ՄԻՄ ՍԱՐ

ՍՈՒԼԹԱՆԻ ՄԱՍՆԱԽՈՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ ԼՕՆԻՕՆՈՒՄ.

Մեր ընթերցողները կը յիշեն «Հնչակ»-ի Nr 11-ի առաջնորդողին մէջ մեր գրածը, թէ «սուլթանը այստեղ, Լօնդօն է ուղարկել մի յատուկ պատգամաւոր, որպէս զի բանակցի հայ յեզափոխականներին հետ և «ընդարձակ բարենորոգումներ» մտցնելու ամեն խոստովանելով անի ուղղակի մեզ սուլթանի կողմից, խնդրելով մեր կողմից էլ գրա փոխարէնը՝ հրատարակել յեզափոխական քարոզները»:

Յիշեալ պատգամաւորը և իր միջնորդը որ թէ գրաւոր կերպով և թէ անձամբ դիմած էին մեզի, մեր կողմէ բացարձակ կերպով մերժուելէ ու վերստուելէն վերջ, այժմ ալ, կերևի որ և է բան մը ըրած ըլլալու համար, սկսած են ուրիշ դռներ բաղտել և մամուլի մէջ սուտ լուրեր տարածել:

«Նիւ Եօրք Հերալտ»-ի Բարիդի թերթը, որ թուրք կառավարութեան վարձկան թերթերէն մին կրտուի, յոյս կը յայտնէ թէ սուլթանի յատուկ պատգամաւորը համաձայնութեան մը պիտի յանգի հայկական քովիներուն հետ: Ընդհակառակ լրագրիւններն ալ, որոնց կարգին «Թայմը», «Սթանտարտ», «Տէլի Կուզ» և այլն, մի քանի օր առաջ գրեցին թէ, սուլթանի յատուկ պատգամաւորը, որուն անունն է Հեռօն Նիվիտսքի բանակցութեան մտեր է «Anglo-Armenian Association»-ի հետ և առաջարկեր է, որ յիշեալ միութիւնը խնդրագրով մը սուլթանին դիմէ Հայկական խնդրոյ կարգադրութեան համար, և թէ իբր այդ մարմինն համաձայնելով՝ արդէն այդ իմաստով խնդրագիր մը զըրկեր է սուլթանին: Սակայն միևնոյն թերթերը իրենց յետագայ համարներով հերքեցին իրենց հրատարակած այս լուրը և ծանուցին թէ, թէպէտև իրու է որ սուլթանի յատուկ պատգամաւորը այս վերջին օրերս գիմեր է յիշեալ ընկերութեան և այդպիսի առաջարկներ ներկայեր է, բայց ընկերութիւնը մերժեր է այդ առաջարկներն և որոշեր է որ և է բանակցութեան չմտնել անոր հետ:

Ըհա՛ ձեզ սուլթանական «առաքելութիւն» մը, որ ստացած Հնչակեան և միւս գովիթներէ հարուածները, անթապարտ և արիւնոտած քթով շուտ մը իր թևերուն տակ կը զնէ իր չարութիւնը և պիտի երթայ ուշաթափուած իմայ իր առաքողին ծոցը: Կուշտ մը ծիծաղելու բան չէ, հապա ինչ է:

ԼԻՍՏՐՈ—ՀՈՒՆԳԱՐՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ԹԵՐԵՐԻ ԴԵՐՈՒՐ.

Կոմս Կոլտիսովսկի, յունիս 9-ին, կիսեցաւ մի նշանաւոր քաղաքական ճառ ողջ, թէ եւ խաղաղասիրական էր, բայց Թուրքիոյ ուղղուած ճանր պողարարութիւններ կը պարունակէր: Խօսելով Հայկական խնդրոյ մաս, նա ըսաւ թէ Աւստրիա, Տալիանսի կը համակրութեան դէպ ի Թուրքիոյ քրիստոնէականք, վարանցաւ մասնակցի Ազգիոյ, Քրիստոսայի և Ռուսիոյ միջադրութեանը, որովհետև կը նախատեսէր այդ միջամտութեան ապարդիւն ըլլալը և այն զէջ հետևանքներն որ պիտի ունենայ Հայերուն նկատմամբ: Երբ երեք պետութիւններու շատուց հակադրութիւնը անհամաձայնութեան մը տեղի տուաւ և արևելեան տագնապը կըստնար վտանգաւոր դառնալ և Գետտութիւնները կուզէին միջամտել և Գեռլիսի Դաշնագրին

առժամայէս մի կողմ թողուլ, Ռուսիա բուն կերպով նախաճակցաւ այս վտանգաւոր առաջարկութեան դէմ և Գեռլիսի Դաշնագրի տրամադրութիւններէն ոնէ խոտորում մը մերժեց. խնդրը կընար յանգի միակ Գետտութեան մը միջամտութեանը արեւելեան ինչորոյն մէջ. ահա այն ատեն Աւստրիա ստաջ անցաւ և յայտնեց իրաց նախկին վիճակը պահպանելու իր հաստատ որոշումը և հետեւանքն այն եղաւ որ ինչորոյն իր սուր կերպարանքը կործնուց և համաձայնութիւնը հաստատուեցաւ պետութիւններու մէջ: Աւստրիա ոյժ տուաւ Ռուսիոյ այդ կէտի մէջ և Ռուսիոյ այդ յայտարարութիւնը նկատեց իբր նոր երաշխիք մը խաղաղութեան պահպանման: Աւստրիա կը փափարէր Արևելքի գործերու գրութեան հաստատուն կարգադրութեանը և Թուրքիոյ պահպանմանը և շուգոր որ որ եւ է պետութիւն մը գերակշիռ ազդեցութիւն ունենայ Արևելքի գործերուն մէջ: Աւստրիոյ այս տրամադրութիւններուն համար Թուրքիա կընար իր շնորհակալիքն արտայայտել, իր նախնականներուն մէջ բարեկարգութիւն մտցնելով և այնու հաստատիք ընծայելով իր կենդանութեանը: Հոս նախարարը խիստ ևս կծու լինուով կը պահարարէր Դրան անգործութիւնը և անդունութիւնը. կը գանգատի թէ Թուրքիոյ մէջ բոլորովն կը պակսին մարդիկ որոնք ընդունակ եւ արամադիւր լինէին գործադիր Սուլթանի կողմէ Հայաստանին խոտաւորուած քարոնորդներինը և թէ այդ խոտաւորները մինչեւ քարո մտնալ տառ մնացին: Նա պատկերացուց Հայաստանի մէջ գործուած վայրագութիւններն ու կոտորածները կարելիին չափ զօրաւոր բաներով և ըսաւ որ անոնք արատ մըն են 19-րդ դարու պատմութեան վրայ, և խորհուրդ տուաւ Դրան առաջին անուն նորայն խղճութիւններու: Ի վերջոյ պղտարանց Դրան թէ. Օսմանեան Կայսրութիւնը, իր այս ընթացքով անխուսափելի կերպով կը մտնուի իր անկման և թէ Թուրքիոյ լաւագոյն բարեկամներն ալ անկարող պիտի ըլլան գնիւր փրկելու: Կրետի գործերուն նկատմամբ ալ ըսաւ թէ, սպառնալքութիւնը ծնունդ տուած է Թուրքիան վատթար վարչութեան պատճառաւ:

ԿՐԵՏԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. ԲԱՂՈՒԱՅՆՆԵ՛ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԷ.


Կրետի մէջ սպառնալքները կը շարունակեն իրենց յազթանակները և Թուրքերն ալ իրենց վայրագութիւնները: Քիսաւո գաւառակի գեղերն այրուած են. Աքրօթ իր քի ի և Բիտօնիայի եկեղեցիները պղծուած և Կաւալայի գեղի քահանայն ալ սպանուած է: Այս վերջին գեղի ընկալիչներն օտար մարտնասերու նաւապետներէ պաշտպանութիւն կը խնդրեն, բայց անոնք կը պատասխանեն թէ, միայն իրենց հպատակներուն պաշտպանութեան համար նրանց ստացած են: Կորթերը այրեցին նաև Սթալօսի և Փէրիփօլիսի գեղերը. Ալիքիստի հովտի բոլոր գեղերն ամայացած են, այս գեղերէն 6,000-էն աւելի կիներ և մանուկներ ապաստանած են Կօնիսի վանքը ուր սովի և թշուառութեան են ենթարկուած:

Հանիայի ոռու հիւպատոսը քերթուեցաւ Գլենիազիցի պաշտպանութեանը և Թուրքերը ընդ մտան Հեռալիսի և իր անտիպիտներն աւարի աւել: Զրիստոնէական կորստուած ապրանքներն ստուրդի կը հանուին շուկաներու մէջ. Հանիայի կախկոպտն այս մասին բողոքեց ընդհանուր կառավարչին և հիւպատոսներուն. այս վերջինը շուգեցին միջամտել: Իթիփիլի մէջ նոր յունեաներ տեղի ունեցած են և անգլիական մարտնասեր մը գացած է այդ քաղաքին առջև: Այլուած գեղերուն թիւը 30-ի կը հասնի. ստացուածքի կորուստը մէկ միլիօն ոսկիէ աւելի կը հաշուուի. 30,000 մարդիկ մերկ և անօթի են:

Ապստամբները լինային անմատչելի զիջեցի կամքաւան, նրկար տունն ղեմադրել կարենալու համար: Յիշենք ասոնց վերջին յաղթութիւնները: Վոլօլիսի կողմէ մէջ ստոնք մեծ շարք տուին Թուրքերուն և զրուեցին 4 թուրքացի և 200 մարթիկի շրացան. Սեմիփրօսայի մէջ ալ յաղթեցին 4 վաշտ զօրքերու, որոց կորուստն է 200 մանուկ 3 թուրքացի և ըստմանի շրացան: Ալիայի, Բօմօնէի և Դիփալիսի և Բիսաւիսիօսի ընդհարումներուն մէջ ալ որոց վերջիններուն մէջ Թուրքերու կը հրամայէր անձամբ Ապստամբ փաշան, յաղթեցին քաջ Կրետացիները և մեծ շարք տուին զօրքերուն, որոց կորուստը 500 մարդէ աւելի է: Թուրք զօրաց վաշտ մը պաշարուելով քիչ մասց պիտի շարուէր և նոյն կի վաշտն ալ գնի ընտելու վտանգի մէջ էր, երբուրեք զօրքը վրայ հասան և ազատեցին:

Վերջին շարքներուն մէջ 4,000 զօրք Ալքսանդրէթի և 2,000 զօրք ալ Միքսիսի հասան Կրետէ: Ասոյք Զէթուլի կորուսին մասնակցող զօրքերն են և չեզ վախցուի թէ Զէթուլիցիներէն իրենց կրած շարաշար կորուստներուն վրէժն ուզեն լուծել նուագ զօրաւոր քրիստոնէականք կըսէ Սթանուար: Դոսպաններն արդէն բողոքեցին ասոնց Կրետէ քրիստոնէականք և յայտնեցին Դրան թէ կոտորածներու կրկնութիւնը ճանր հետեւանքներ կուսենայ Թուրքիոյ համար: Կրետի մէջ Թուրք զօրքերու թիւն ասոնցով 26,000-ի է հասած: Կրետէ դրուած է նաև Ապստիւլէի մ փաշան իրբու ընդհանուր բողոքի և վերջերս Սատրգ պէյ անուն մարդ մ'ալ իրբու քնիշ ուղարկուած է Սուլթանի կողմէ...

Կրետական քովիթէն յայտարարած է իր պահանջները. Հալիօսայի դաշնակց, որ արդէն գործարկուած է, այժմ անբաւական կը նկատուի. թէպէտ անկախութիւնը կրտացիներուն կուտայ է, բայց նոցա այժման պահանջներն իտեւեալներն են. 1. Դրահատար կառավարչի ընտրութիւնը մեծ տրթութիւններու երաշխաւորութեան տակ և պաշտօնը 5 տարի. 2. Կողմից տնտեսական անկախութիւնը. մարդի հասոյթին կէտն ալ կը մայ կողմին. 3. Ռաթիկանութեան վերականգնութիւնը. քաղաքային և գեներալական վարչութիւնը միանգամայն յանձնուի ընդհանուր կառավարչին. 4. Ընդհանուր ժողովի քուէարկած օրէնքներուն վրայ Վէթօյի իրաւունք ունենայ. միայն ընդհանուր կառավարիչը: Վերջին օրերս կը հաստատուի թէ պետութիւնները խորհուրդ տուած են Դրան թշուառութիւնները դադարեցնել, մասնա-



Ներքևից Մակեդոնիայի եւ ուրիշ զաւասաններու վտանգաւոր դրութիւնը. Դուռը, իր քանակներու վերջին պարտութիւններէն եւ եւրոպական տագնապէն ընդունովն ներք ինկած՝ ճրահանգ որիւմ է կըզինն կառավարչին որ ճիւղատոմսներու ճեռ ուղղակի քանակացութեան մտնէ: Մասնաւորապէս Փրանսսա եւ Ռուսիա կողմերը կուտան Դրան շուտով հաշտութիւն գոյացնելու, առաջին աննելու համար Անգլիոյ միջամտութեան. վասն զի գրայց կը պտորտի թէ արդէն Կրետացիք դիմած են Անգլիոյ, անոր նովանաւորութիւնը ինդրելով կըզինն վրայ: Ամենէն գործնական եւ նպատաւոր լուծումը կը նկատուի Կրետէն վերածել մի հարկատու իշխանութեան, Սամոսի նման:

Սուլթանը իրատէ մի հանած է, որով կը հրամայէ որ կըզինն ընդէ. ժողովը գումարուի եւ կը խոստանայ ընդունելու անոր մեծամասնութեան «օրինաւոր եւ իր վեճապետական իրաւունքներուն չհակառակող» պահանջքները. կը խոստանայ նաեւ ընդամտը ներում, քայց պայմանաւ որ ապստամբները կանխաւ նպատակութիւն յայտնեն... Իրատէն կը հրամայէ նաեւ որ թուրք զօրքերն յարձակողական դիրք չընեն:

Տարակոյս չկայ սակայն որ կրետացիք իրենց զենքերը վարչական դնեն, մինչեւ ընդունելու տան իրենց արդար պահանջքները եւ իրական երաշխաւորութիւններ ստանան անոնց գործադրութեանը:

Վ Ե Ր Զ Ր Ն Լ Ո Ւ Ր Ե Ր .

ԿԱՒԱԶԱՆ Կ. ՊՕԼՍՈՒՄ.

ՀԵՌԱԳԻՐ ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ.

Կ. Պօլիս, 15 յունիս.

Խալիլ օստիկանի սպանութեան համար մահուան դատապարտուած երկու Հայերն այս առաւուտ հրապարակաւ կախուեցան, մին Կալաթա եւ միւրը Փարմազ-Ղափու: Ընկարգութիւն մը ք պատահեցաւ:

ԱՐԻՒՆԱՅԵՂ ԴԵՊԳԵՐ ՎԱՆՈՒՄ.

Վերջին պահուն հեռագիրը հաղորդում է, որ Վանում տեղի են ունեցել խիստ ծանրակըշիւ եւ արիւնասէղ դէպքեր:

ԿՈՒՍԱԿԵՑՈՒԹԵԱՆ Վ. ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ ԶՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆԻ ՍՏԱԳՎԵԼ ԵՆ ՀԵՏԵԿԵՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ. —

ԵԳԻՊՏՈՍ. — Գ. Վ. Տիբէի Հնչ. Մասնաձիւղից 147 դուրուշ ողջ. Նոյն Մասնաձիւղի եռամսեայ հաշիւը, որի գումարն է 1158 դրշ ողջ, վաւերացված է կենտրոնի կողմից:

ՀԱԿԻՅՑԱՐԻԱ. — Լ. զան քաղաքից մի տիկինից 10 Փրանկ, Ժըն. ք. -ից 5 Փր., Գ. -ից 5 Փր., Վ. -ից 5 Փր., Տ. Ա. -ից 15 Փր.:

ՖՐԱՆՍԻԱ. — Բ. զէն քաղաքից Վասէից 4 Փրանկ:

ԱՄԵՐԻԿԱ. — Ա. քաղաքից քաղաքից Հայկակ-Ապահից 1 զօլար:

ՌՈՒՄԱՆԻԱ. — Պըռլա քաղաքի գաղթականներին մէջ հանգանակված Զէյթունի համար, հետեւեալ կերպով. Մ. Աստուր 20 Փրանկ, Ն. Սերէֆ 20 Փր., Ասփա (յոյն) 4 Փր. Գառն. Ա. 10 Փր. Յակ. Վասիլ. 20 Փր. Սաէֆ. Ֆէրհ. 26 Փր. գումար 100 Փրանկ.

ՏԱՃԿԱՍՏԱՆ. — Խառն քաղաքի Հնչ. Մասնաձիւղի գանձարանում ստացվել են հետեւեալ նուէրները. կանանց վրէժ խմբից 753 դուրուշ. Կարձեալ Գ. Արուսեակի խմբից 200 դր., Հրատի խմբից 150 դր., Հրատի միջոցով Սագոյից 250 դր.:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. — Թ. քաղաքի Հնչ. Մասնաձիւղի գանձարանում ստացվել են հետեւեալ գումարները. Ռժ 10 զուան, Արշ. Ներս. 50 զ., Ռժ 20 զ., Հարժուեցէք 20 զ., Աշխոյժ 30 զ., Եռանդ 10 զ., Գրիգ. 20 զ., Ս. Տ. Ս. 100 զ., Ա. Տ. Հ. 100 զ., Ընկերութիւն 45 զ., Ասում 10 զ., Յ. Մ. Ե. 50 զ., Ս. Գ.

30 զ., Յ. Գ. Բ. 100 զ., Մի օժի Ինոց... 50 զ., Եւս 10 զ., Աւրան 50 զ., Ստ. Յ. Յար. 50 զ., Յ. Ա. 10 զ., Մի Պարսիկ 5 զ., Կիկո 20 զ., Կ. Բ. 50 զ., Տ. Ս. Խան 100 զ., Յ. Խան 10 զ., Գ. Խան 10 զ., 61-րդ յօդուած 50 զ., Ռժ հայ 20 զ., Բրէթ 15 զ., Յոյս 50 զ., Ռժ որ է 50 զ., Յորդ 40 զ., Աշուէլ 50 զ., Նիկ. Սեվ. 50 զ., Բ. Ս. 30 զ., Ճանապարհորդներ 250 զ., Վահ. Մէլ. Մազ. 10 զ., Ռժ 20 զ., Ռժ 10 զ., Ռժ 5 զ., Ստե. Սիմէ. 20 զ., Կուզըն. Ա. 15 զ., Նիկ. Մերս. 5 զ., Տիգ. Գ. 5 զ., Ա. Յովհ. 5 զ., Ա. Պետր. 10 զ., Խաչ. Մարտ. 20 զ., Խաչ. Մին. 20 զ., Ա. Լ. Մուս. 50 զ., Ռժ 50 զ., Ս. Ներս. 20 զ., Ա. Կնեազ. 20 զ., Մի օժի 10 զ., Ս. Ներս. 60 զ., գումար 1920 զ., Նաեւ Ս. Ներս. 1 ըէփօլ., 50 պո. և մէջկապ:

Պարձեալ նոյն քաղաքի Հնչ. Մասնաձիւղն ըստացած է Ռ. Ու. Ս. Ից Տ. ք. Ի Նշ. -ից 2 հրացան, 200 փամփուշտ, Նշ. -ից 3 հրացան, 500 փամփ., Խաչ. 2 հրացան և 200 փամփ.: Պարսկաստանի Թ. ք. -ից Ն. Հի. -ից 2 հրացան, 1 ըէփօլէր և 200 փամփ., Մուրձից 1 հրացան, փամփուշտամանով և 25 փամփուշտ, Նաեւ. Ռ. ք. -ից Բժ. Ս. Յ. -ից 150 զ., Ս. Տ. Ս. -ից 100 զ., * -ից 100 զ., Կրպոյց 1 ըէփօլ., 100 փամփ. և 150 զ., Բրէթից և Ստ. -ից 100 զ., Ս. Խան. Ս. Խան. -ից 180 զ., 61-րդ յօդուածից 120 զ., Աշա-բաբից 150 զ., X. 100 զ., Ռժ 50 զ., Գ. Մ. Գ. 20 զ., Ռժ 20 զ., Արցախ 50 զ., Ռժ որ է 50 զ., Տիր. ՕՏ. 200 զ., Համբերութիւն 50 զ., Յոյս 100 զ., Սիտեռա 200 զ., Նեւ. 10 զ., Յոյն D. P. 200 զ., Մար. Բու. 50 զ., Մ. Գ. 75 զ., Երկունք 30 զ., Մի անծանօթ 200 զ., Ասողիկ 5 զ., Ռժ 50 զ., Աշխոյժ 50 զ., Միս... 20 զ., ք. -ի Են Օրդուբաթցի 60 զուան: Արդարելի ք. -ից Պ. Յակ. Էլշ. 850 զուան: Թազը. Հնդկաստանցի մի հայ 40 թուման. Ղազբին ք. -ից Արգ. Տր. -Յակ և Բաղդ. Տ. Սարգս. -ի միջոցով հանգանակված 525 զուան: Ռուսաստանից. Բ. քաղաքից Վասնի միջոցով 433 թուման: № 8 «Հնչակ» -ում սըլխալմամբ տպված է Մարաղայից 120 թուման. — պէտք է լինի 320 թուման:

ԱՆԿԼԻԱ. — Սագայէից 10 անգլ. ոսկի:

ԱՄԵՐԻԿԱ. — Սէլիմ քաղաքի Հնչակեան Մասնաձիւղից երկու անգամից, Յունվարին և Ապրիլին 254 զօլար (նպաստ Զէյթունի):

Ա. Օ. Վ.

Խնդրում ենք, որ մեզ դրամական մանդատ ուղարկողները միշտ մասնաւոր նամակում ներփակեն իրանց մանդատները և այնպէս ուղարկեն, և կամ դէթ մասնաւոր կերպով հաղորդեն մեզ իրանց մանդատի թիւը, որպէսզի մեզ յայտնի լինի ուղարկողի անունն ու բնակավայրը:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].
ՏՊԱՐԱՆ «Հնչակ»-ի. ԼՕՆԻՕՆ.

